ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզ գ. Արևաշող 1 Փ. 105, Հեռ. 0255-2-21-76

N ԼՄԱՀ 0212
*25 հոկտեմբեր 2019թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33 - րդ հոդվածի 4 -րդ կետի 9) - րդ ենթակետով կից Ձեզ եմ ներակայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 46, 47 որոշումները:

Առդիր՝ 2 էլ. նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Սեվադա Սահակյան*
*0255-2-21-76*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, Հեռ.0255-2-21-76,
Էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 Հոկտեմբերի 2019 թվականի N 46

## ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5 - րդ հոդվածի 5 - րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9 - ի թիվ 877-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 37 – րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 877-Ն որոշման 5- րդ հավելվածով 112-001-41 ծածկագրով Արևաշող համայնքին փոխանցված, համայնքային սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-021-0043-0016 ծածկագրով բնակավայրերի այլ նշանակության հողամասից առանձնացված 0.0075 հա այլ հողամասի սահմանները, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Արևաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-021-0043-0016 ծածկագրով բնակավայրերի այլ նշանակության հողամասերից առանձնացված 0.0075 հա հողամասը առանձնացնել և համարել, որպես առանձին գույքային միավոր:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայականներ տրամադրելու համար:
4. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի Օգոստոսի 30 – ի «Հողամասից միավորի առանձնեցման եվ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման մասին» թիվ 36 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» Հոկտեմբերի 2019 թվականի № 47

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 – րդ հոդվածի առաջին մասին 22 – րդ և 59 – րդ հոդվածի առաջին մասի 3 – րդ կետերով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 – ի թիվ 2387 – Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 37 – րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լոռու մարզի Արևաշող համայնքում 06-021-0043-0016 ծածկագրի տակ գտնվող 0.0075 հա տնամերձ հողամասը հասցեավորել 1 Փ. № 57/1 հասցեով:
2. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ղեկավարի 2019 թվականի Օգոստոսի 30 – ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» թիվ 37 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ